

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆՈՒՏ
ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ 144 ՏԵՂ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏԻՊԱՅԻՆ /ՄՈԴՈՒԼԱՅԻՆ/ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ /ԼՐԱՄՇԱԿՎԱԾ/

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ

Ա. Մինասյան

ԵՐԵՎԱՆ 2024

Բովանդակություն

Հապավումներ	3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	6
3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ	7
4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	9
5 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	27
6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ	41
7 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	49
8 ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ	52
9 ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	53
6 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	

Հապավումներ

ԱԶԲ	Ասիական Չարգացման Բանկ
ԲԱՄ	Բողոքների արձանագրման մեխանիզմ
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ՍԱԲ	Սեյսմիկ անվտանգության բարելավում
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության Շինարարության Նորմեր
ՀՏԶՀ	Հայաստանի Տարածքային Չարգացման Հիմնադրամը
ՀՄԿ	Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն
ՇՆԿ	Շինարարական նորմեր ու կանոններ
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիր	ՀՀ Արագածոտնի մարզ, Ապարան համայնք, Վարդենուտ բնակավայրում նախատեսվող 144 տեղ կրթահամալիրի կառուցում
Ծրագրի պատվիրատու	ՀՀ Քաղաքաշինության Կոմիտեի
Ձեռնարկող	«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ, ՀՎՀՀ 08914368
Ձեռնարկողի հասցե	ՎՁՄ, ք. Վայք, Երկրաբանների փ. 7,
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ էլ փոստ և հեռախոս`	Էլ. փոստ` archicad1414@mail.ru Հեռ.՝ +374 33 25 20 64
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ Արագածոտնի մարզ, Ապարան համայնք, Վարդենուտ բնակավայր
Կառուցապատվող տարածքի մակերեսը	2,112հա /ծածկագիր 02-102-0035-0048/
Կառուցապատման մակերեսը	2100 քմ
Կրթահամալիրի նախագծային հզորությունը	144 աշակերտ

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ապարան համայնքի Վարդենուտ բնակավայրում նախագծվող կրթահամալիրի կառուցումն իրականացվելու է ՀՀ Քաղաքաշինության Կոմիտեի պատվերով:

Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է անհատական, հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:

Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի յուրաքանչյուր ենթածրագրի համար իրականացվում է բնապահպանական ազդեցության գնահատում՝ ԱԶԲ Անվտանգության քաղաքականության դրույթների (2009թ.) և ՀՀ օրենսդրության համաձայն: Համաձայն ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի (21 հունիս, 2014թ.) /խմբագրված 2023թ/ Հոդված 12, կետ 8) քաղաքաշինության բնագավառում՝ ա. քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով, կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի նախագծերը դասվում են «Բ» կատեգորիայի, որի համար պահանջվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ հաշվետվություն) փաստաթղթի պատրաստում և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության իրականացում:

ՀՀ Արագածոտնի մարզ, Վարդենուտ բնակավայրում նախատեսվող 144 տեղ կրթահամալիրի կառուցապատման մակերեսը գերազանցում է 1500 քմ և համաձայն սույն օրենքի պահանջում է ՇՄԱԳ հաշվետվության մշակում և ներկայացում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պետական փորձաքննության և համապատասխան պետական փորձաքննական եզրակացության ստացում:

2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ

ՀՀ Քաղաքաշինության Կոմիտեի համար մշակվել է ՇՄԱԳ հաշվետվության փաստաթուղթը: Փաստաթղթի նպատակն է համատեղել ՀՀ օրենսդրական նորմերի և ԱԶԲ բնապահպանական անվտանգության մեխանիզմների պահանջները: Փաստաթուղթը մշակվել է որպես ՍԱԲ ծրագրի բնապահպանական գնահատման ուղեցույց Հայաստանի Տարածքային Ջարգացման Հիմնադրամի (ՀՏՁՀ) համար, որը հանդիսանում է Ծրագիրն իրականացնող մարմինը: Փաստաթուղթը ներառում է նաև Ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնական սկզբունքները, դպրոցների ընտրության չափանիշները, կազմակերպումը և ԲԿՊ իրականացման ընթացակարգերը՝ Ծրագրի իրականացման նախագծման, նախաշինարարական, շինարարության և հետշինարարական փուլերում:

2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և/կամ նվազեցմանն ուղղված անհրաժեշտ բնապահպանական մեղմացման միջոցառումները:

2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության կազմը

ՇՄԱԳ հաշվետվության մեջ գործընթացում դիտարկվող գործողությունները, շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը սահմանված են "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 14 կետերում:

2.4 Շրջակա միջավայրի վրա ազդեցության ՇՄԱԳ հաշվետվության մեթոդաբանությունը

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվության մշակումն իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին, ինչպես նաև ԱԶԲ-ի-բնապահպանական ուղեցույցների և ձեռնարկների դրույթներին համապատասխան: Գնահատման հաշվետվությունում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախագծվող կրթահամալիրի աշխատանքային նախագիծը,

- նախատեսվող գործունեության տեղանք կատարած այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը,
- գտնվելու տեղանքի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները, քարտեզները,
- ծրագրի իրականացման համար մշակված Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ (ԲԳՈԻՇ) փաստաթուղթը,
- ՀՀ օրենսդրության բնապահպանական և օրնսդրական կարգավորիչ շրջանակը
- ազդակակիր և շահագրգիռ կողմերի հետ քննարկումները:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ

ՀՀ բնապահպանական օրենսդրական և կարգավորիչ շրջանակն ընդգրկում է ավելի քան 30 բնապահպանական օրենքներ: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (2015). Հոդվածներ 10 սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև հողված 8-ի համաձայն Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին:

ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014) (խմբագրված 2023թ) պահանջում է իրականացնել ծրագրերի բնապահպանական գնահատում, գնությունն ու ըստ կատեգորիաների դասակարգում կախված գործունեության ձևից, ինչպես նաև ենթարկել պետական փորձաքննության և ստանալ փորձաքննական եզրակացություն:

ՀՀ Օրենքը Թափոնների մասին (2004) կարգավորում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքագրումը, տեղափոխումը, պահեստավորումը, վերամշակումը և տեղադրումը ՀՀ-ում:

ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005) կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:

ՀՀ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և

անցկացման մասին (2000) կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:

ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998)(Հոդվածներ 13,14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N11- Ն «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44 Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործնեության լիցենզավորման կազմը հաստատելու մասին> (2003), որը սահմանում է վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները:

ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N781, <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>>:

ՀՀ Կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N967-Ն:

ՀՀ օրենքը ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ) <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>>-կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը:

ՀՀ Զրային Օրենսգիրք /04,06,2002թ/

Ուղեցույցներ և ստանդարտներ

ՀՀ տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտներ, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՀՀ Արագածոտնի մարզ, Վարդենուտ բնակավայրի միջնակարգ դպրոցի հողամասում կառուցվող 144 աշակերտի համար տիպային դպրոցի տեղակապման նախագիծը իրականացվել է ըստ պատվիրատույի /ՀՀ Քաղաքաշինության Կոմիտեի/ կոմից տրված տեխնիկական առաջադրանաքի և համաձայն ՀՀՇՆ պահանջների: Ներկայացված նախագծի բարեկարգում զբաղեցնում է 2.112 հա, հասանելիություն ունի բոլոր ենթակառուցվածքներին /Խմելու և ոռոգման ջուր, բնական գազ, էլեկտրաէներգիա, աղբահանություն/: Հողամասի նպատակային նշանակությունը նույնպես համապատասխանում է նախագծի իրականացման նպատակներին:

Համայնքապետարանի կողմից տրված նախագծման թույլտվության դրույթները նույնպես պահպանված են, հեռավորություն կարմիր գծից, հեռավորություն հարևան հողակտորներից:

Նախագծի տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են Հողամասի ընհանուր մակերեսից

- 2100 քմ կամ 9,95%-ը նախատեսվում է կառուցապատել /դպրոցի մասնաշենք, պարիսպ, կաթսայատուն և այլն/
- 12490 քմ կամ 59,1%-ը կանաչապատել
- 3500 քմ նախատեսվում է բարեկարգել, որպես ճանապարհներ և սավաճքներ՝ 1950քմ, վերջիններիս՝ 25,80% մակերևույթները նախատեսվում է իրականացնել ասֆալտաբետոնից, բազալտե, տուֆե և բետոնե սալերից:
- 800քմ կամ 3,8%-ը նախատեսվում է իրականացնել միաձույլ ռետինե մակերևույթից, խաղահրապարակների կամ կից տարածքների բարեկարգման համար սպորտային միջոցառումների ժամանակ վնասվածքներից խուսափելու համար
- 280քմ կամ 1,35%-ը նախատեսվում է փակել ավազային աձկույթով:

144 աշակերտի համար տիպային կրթահամալիրը նախատեսված է կառուցել Հայաստանի II, III, IV կլիմայական և III սեյսմիկ գոտիներում:

Արտաքին հաշվարկային ջերմաստիճանը ընդունվել է -15° ; -20° և -25° :

ՀԱՐՏԱՐԱՊԵՏԱ-ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄ

Շենքի ծավալա-տարածական լուծումը իրենից ներկայացնում է երեք իրար կցված ծավալներից երկհարկանի հիմնական դպրոցի մասնանաշենքից, մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի մասնաշենքից և մեկ հարկանի մանկապարտեզից:

Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ:

Հանդիսությունների դահլիճը նախագծով նախատեսված է 144 նստատեղի համար, իսկ

մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա, մարզադահլիճի չափերը՝ 24.7մx18.0մ:

Առաջին հարկի ռեկրեացիայի երկու կողմերում նախագծված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ:

Իսկ երկրորդ հարկի ռեկրեացիայի շուրջը՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի դասասենյակ, մեթոդկաբինետ, ռազմագիտության դասասենյակ, ռոբոտատեխնիկայի դասասենյակ և ուսուցչանոց:

Դպրոցի մասնաշենքում նախագծվել է նկուղային հարկ 21.6x20.4մ, որը օգտագործվելու է որպես թաքստոց:

Նկուղային հարկում տեղավորվել են գրադարանը, խոհանոցը, բուժկետը, պահոցները, տղաների և աղջիկների սանհանգույցները, էլեկտրովահանակ, ջրի ռեզերվուար, կաթսայատուն, կոյուղու պոմպարան:

Բոլոր հարկերը իրար հետ կապված են աստիճանների միջոցով և ունի հարկերը կապող միջհարկային ամբարձիչ հաշմանդամների համար

Դպրոցի հիմնական մասնաշենքի երկրորդ հարկի կոնսուլային ծավալը արտահայտում և շեշտում է գլխավոր մուտքը, որը հանդիսանում է կառույցի կոմպոզիցիոն առանցքը:

Գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ դպրոցական բացօթյա միջոցառումների համար :

Մանկապարտեզի մասնաշենքը նախագծված է երկու հարկից երկու խմբի համար և միջանցքով կապված է

դպրոցի մասնաշենքի հետ:

Առաջին հարկում տեղադրված են հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, ննջասենյակներ,

վարիչի, բժշկի և դայակների սենյակներ:

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ

Ճակատի խարսխային մասը երեսապատված է բազալտե սալերով:

Նախագծով նախատեսված է ճակատները երեսապատել ավտոկլավինացված ֆիբրոցեմենտային 8 մմ

հաստությամբ սալերով, գործարանային ներկածածկույթով:

Մարզասրահի, հանդիսությունների դահլիճների և նախակրթարանի մասնաշենքի մուտքերը շեշտված են

ֆիբրոցեմենտային այլ երանգի սալերով:

Տանիքի ծածկույթը մուգ մոխրագույն բիտումային կղմինդրից է:

Արտաքին դռները այլումինե ջերմակամրջակով են ներկված մուգ մոխրագույն գույնով:

Արտաքին պատուհանագոգերը, հովհարը, քիվերը, դռների և պատուհանների շեպերը երեսապատել այլուկաբոնդով: Գլխավոր հատակագծում դպրոցի ամբողջ տարածքը բարեկարգված է, նախագծված է 4.0 x 8.0մ ջերմոց, 26x14մ բաց ցանկապատված մարզադաշտ, 100մ երկարություն ունեցող վազքուղի, տնտեսական բաք, ավտոկայանատեղի, ինչպես նաև էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակների համար ցանկապատով տարածք :

Դպրոցի հողամասը ամբողջ պարագծով ցանկապատված է:

Տեխնոլոգիական մաս

Նախագծվող դպրոց-մանկապարտեզի տեխնոլոգիական մասի համար հիմք են ծառայել ճարտարապետա- շինարարական գծագրերը և ՀՀ տարածքում գործող շինարարական դրույթները:

Շենքը բաղկացած է երկու հարկանի դպրոցից և մեկ հարկանի մանկապարտեզից: Մանկապարտեզի համար նախատեսված է ամբարձիչ:

Տարածքների կազմը և մակերեսները, շենքի հատակագծային կառուցվածքը ապահովվում է 1-12-րդ դասարանների ուսումնական ծրագրերի դասընթացների կազմակերպումը:

Ելնելով տարածքների խմբավորումից, դպրոցի շենքը նախագծված է հետևյալ կերպ՝ 1-12-րդ դասարանների դասավանդումը կազմակերպված է առաջին և երկրորդ հարկերում:

Դասավանդումը առանձին առարկաների գծով անցկացվում է ընդհանուր ուսումնամաս կաբինետներում: Կաբինետները կահավորված են ցուցադրական և աշակերտական լաբորատոր սեղաններով: Քիմիաի լաբորատորիայում տեղադրված է օդաքարշ պահարան: Լաբորատոր սեղանները համալրված են վարդակներով, քիմիայի լաբորատոր սեղանները լրացուցիչ համալրված են ջրի ծորակներով:

Դասարանները նախատեսված են 12 աշակերտի համար:

Շենքի առաջին հարկում գտնվում են գլխավոր նախամուտքը, պարետի վարչական սենյակները: Դպրոցը ապահովված է բժշկի կաբինետով, որը կահավորված է անհրաժեշտ բժշկական կահույքով:

Նախատեսված է մարզասրահ 60 տեղանոց տրիբունայով, հանդերձարաններ սանհանգույցով, մարզիչի առանձնասենյակ և գույքի պահեստ:

Առաջին հարկում գտնվում է հանդիսությունների դահլիճը 144 տեղով իր հանդերձարանով, որը հնարավորություն է տալիս անցկացնել երգի, թատերական, երաժշտական և պարարվեստի խմբակային դասընթացներ:

Նույն հարկում նախատեսված է բուֆետ բաշխման տարածքով:

Դպրոցի երկրորդ հարկում նախատեսված են դասարաններ, ինֆորմատիկաի կաբինետ, ռազմագիտության դասարան և ռոբոտաշինության կաբինետ:

Դպրոցի նկուղում տեղակայված է ավանդական գրադարան գրապահոցով և ընթերցասրահով, որտեղ տեղադրված են համակարգիչներ և պատճենահանման սարքավորում:

Նույն հարկում է գտնվում Էլ. կաթսայատունը, Էլ. վահանակը, սան. հանգույցներ, բուժկետ:

Դպրոցին կից նախագծված է մեկ հարկանի մանկապարտեզ, բաղկացած 2 հատ 20 տեղանոց խմբակային բջիջներից: Խմբերը համալրված են հանդերձարաններով, ննջարաններով, խմբակային սենյակներով, բուֆետներով և սան. հանգույցով: Մանկապարտեզում նախատեսված է բժշկի կաբինետ և վարչական շենքեր:

Մանկապարտեզի և դպրոցի երեխաների սննդի մատակարարումը կազմակերպվում է դպրոցի բուֆետից: Պատրաստի սնունդը ներմուծվում է, դպրոցի բուֆետի խոհանոցի տարածքում տաքացվում է և բաշխվում մանկապարտեզի և դպրոցի երեխաների միջև:

Մանկապարտեզի երեխաների սննդի մատակարարումը կազմակերպվում է մանկապարտեզի բուֆետից, որը առկա է բոլոր խմբակային բջիջներում:

Աշակերտների սննդի մատակարարումը կազմակերպվում է դպրոցի բուֆետից, իսկ բաշխումը բուֆետի վաճառասեղանից:

Դպրոցի և մանկապարտեզի բոլոր սենյակները կահավորված են համապատասխան սարքավորումներով և կահույքով:

Գոյություն ունեցող բոցին հարակից առկա է ընդամենը երկու ծառեր, կրթահամալիրը կառուցվելու է նույն տարածքում, որի հեռավորությունը գլխավոր ճանապարհից 10մ է: Մոտակա շինությունից

հեռավորությունը կազմում է 19մ: Գլխավոր ճանապարհին զուգահեռ առկա է գործող Ջրագիծ , որին նախատեսվում է միանալ շինարարության և շահագործման փուլերում: Մատակարարումը կիրականացվի ենթակառուցվածքները տնօրինող կազմակերպությունների միջև կնքված պայմանագրի կամ տեխնիկական պայմանի համաձայն:

Նախագծով նախատեսվում է 127.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում շինության տանիքին:ՖՎ վահանակները տեղակայվելու են տանիքին՝ տանիքի ուղղությանը զուգահեռ, 19° հորիզոնական թեքությամբ: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 232 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսքիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 16 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար: Դրանք միանում են փոխակերպիչների ԱՀԿՈԻ 4 մուտքերին, փոխակերպիչների անվանական ելքային հզորությունը 60 կՎտ /Եռաֆազ/:ՖՎՀ-ն միացվում է դպրոցի գոյություն ունեցող հողանցման ցանցին:

Դպրոցի նախագծման աշխատանքների համար հիմք են հանդիսացել.

- Պատվիրատուի կողմից ներկայացված/մշակված տեխնիկական առաջադրանքը,
 - Ապարանի համայնքապետարանի կողմից ներկայացված ճարտարապետահատակագծային առաջադրանքը
 - «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերով (ՀՀՇՆ 31-03.01-2014) ներկայացվող պահանջները,
 - ՀՀ կառավարության որոշումները և քաղաքաշինության ոլորտում գործող իրավական նորմերի շրջանակը:
- a. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումները

Կրթահամալիրի գլխավոր հատակագիծը ներկայացված է Նկ.1-ում:



Նկ.1 Գլխավոր հատակագիծը:

Շինարարական աշխատանքների կազմակերպում

“Շինարարության կազմակերպում” բաժինը մշակված է նախագծման տեխնիկական առաջադրանքի հիման վրա համաձայն ՀՀՇՆ I-3.01.01-2008 և ընդգրկում է՝

- աշխատանքների կատարման համար ներկայացվող տեխնիկական տվյալներ,
- բացատրագիր, կատարվող աշխատանքների անվտանգության
- պահպանման հրահանգներ
- աշխատանքի կատարման ժամանակացույց,
- շինարարական հրապարակի գլխավոր հատակագիծ,
- հավելված / մոնտաժային մեխանիզմի ընտրություն,
- կատարվող աշխատանքների որակային ստուգման հրահանգներ/:

Բաժնի մշակման ժամանակ օգտագործվել են հետևյալ նորմատիվային փաստաթղթերը.

- ՀՀՇՆ I-3.01.01-2008 “Շինարարության կազմակերպում”
- N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում
- ՍՆԻՊ 1.04.03-85*՝ “Շինարարության տնտրության և նախակատարման նորմեր շենքերի և կառույցների շինարարությունում”,
- ՍՆԻՊ III-4-80*՝ “Անվտանգության տեխնիկական շինարարությունում”,
- ГООСТ 12.1.046-85 “Շինարարական հրապարակների լուսավորման նորմաներ”,
- ՀՀՇՆ II-7.01-2011 «ՇԻՆԱՐԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
- Ինժեներա-երկրաբանական հետազննությունների նյութեր:

Շինարարության պայմանները՝

Նախագծվող շինությունը դպրոցի շենք է:

Աշխատանքների կատարման համար ներկայացվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները՝

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 2 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ - 10 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ - 4 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1		Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ	
NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Էքսկավատոր	HOWO	4
2	Էքսկավատոր	KAMAZ	1
3	Բուլդոզեր	KOMATSU D37-EX-22	1
4	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	1
5	Վերամբարձ ավտոկրունկ	Галичанин КС-65713-1	1

6	Տոփանիչ	CR 3/60	3
7	Գուլքային կաղապարամած	կոմպլ.	3
8	Թրթրիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	3
9	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	3
10	Փոխարկիչ թրթրիչների համար	ИБ-4	3
11	Նռակցման տրանսֆորմատոր	СТН-500	3
12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	6
13	Ձեռքի էլեկտրական դուր	ИЭ-1208Э	3
14	Հղկող մեքենա	ИЭ-2201	6
15	Թրթրազլղոն	НАМИ 3410	1
16	Ավտոբետոնախառնիչ	СВ-69Б	հաշվարկով
17	Ավտոբետոնատար	КрА3-65055	հաշվարկով
18	Ինքնաթափ ավտոմոբիլ	МА3-5550	հաշվարկով

Շինարարության ջրի և էներգառեսուրսների պահանջարկը

Պահանջարկը որոշվել է աշխատանքների ծաքվալների, կատարման ժամկետների և Պետշինի խոշորացված նորմերի հիման վրա:

էներգառեսուրսների և ջրի պահանջարկ

NN	Անվանում	Չափման միավոր.	Պահանջարկ
1	Էլեկտրաէներգիա	Քաշվ.ԿՎԱ	22.0
2	Ջուր	մ ³ /օր	8.52
3	Խտացված օդ	հատ	1 կոմպրեսոր

Հակահրդեհային նպատակներով ջրի պահանջարկը 10լ/վրկ

Նշված պահանջարկները պետք է ապահովվեն ժամանակավոր տրանսֆորմատորային ենթակայանից և ջրմուղի քաղաքային ցանցից: Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա, Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարության 28.04.1998 թ. Թիվ 44 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ-ի դրույթների համաձայն:

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը, շինարարական կոնստրուկցիաներ, շինվածքների, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին,

Շինարարության մատակարարումը ացթիլենով, թթվածնով իրականացվում է կենտրոնացված եղանակով:

Ստորև բերվում են ջրօգտագործման հաշվեկշիռը և անհրաժեշտ էլեկտրական հզորության հաշվարկը:

Հաշվարկ

Բարձրահարկ բազմաբնակարան շենքի կառուցման համար անհրաժեշտ էլեկտրական հզորության մեկ միավոր մասի շինարարության համար

- | | | |
|----|---|---|
| 1. | Տոփանիչ CR 3/60 | 2 |
| 2. | Եռակցման սարքեր / 2 հատ | 3 |
| 3. | Տարբեր էլեկտրաուժային սարքավորումներ /դակիչներ, դուրեր, սղոցներ և այլն/ | 5 |
| 4. | Էլեկտրաթրթռիչներ | 2 |
| 5. | Շինհրապարակի լուսավորում և կենցաղ | 8 |
| 7. | Շենքի լուսավորում | 7 |

P տեղ.=22 ԿՎտ

P հաշվ.=Pտեղ.* Kպահանջ.=31.8ԿՎտ/ 0,8= 39.75 ԿՎԱ

Ջրօգտագործման հաշվեկշիռ

Անվանում	չափ. Միավ.	չափ. Միավ.	Հիմք	Միավ. Ծավ.	Պահանջվող որակ	Ծավալ մ3/օր խմելու.	Ծավալ մ3/օր տեխնիկ
1	2	3	4	5	6	7	8
Տնտեսական/կենցաղային կարիքներ							
Կենցաղային ցնցուղ-լվացարան	1աշխատ.	23	Пособие к СНиП 3.01.01-85	0.016	խմելու.	0.368	

Կենցաղային	Ի	46		0.025	խմելու.	0.75	
Ղողերի ըվացում	մեքենա հաս	10		0.14	տեխնիկական		1.40
Բետոնի պատրաստ.	Բետոն մ3	3.0		0.72	խմելու.	2.16	
Բետոնի խնամք	ջրում,մ3	20		0.0314	խմելու.	0.63	
Շինհրապարակի մաքրում	ջրում,մ2	800,0		0.004	տեխնիկական		3.20
Ընամենը`						3.91	4.6

Շինարարական տեխնիկայի շարժման գրաֆիկ

Անվանումներ	Եռամսյակներ												
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
Բուլդոզեր		■										■	
Էքսկավատոր		■											
Տոփանիչ		■	■									■	
Ինքնաթափ ավտոմոբիլ		■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
բետոնեփոխադրիչ ավտոմոբիլ		■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■

Ներկայացվող գործունեության նախաշինարարական փուլում, համաձայն գործող նորմերի, կիրականացվի դպրոցի տարածքի ժամանակավոր ցանկապատում մետաղական թիթեղներով՝ ապահովելով առողջության և աշխատանքի անվտանգության պայմանները, ինչպես նաև կիրականացվեն շինարարական հրապարակի կազմակերպման աշխատանքներ, մասնավորապես՝

- հրապարակի լուսավորության ապահովման միջոցառումները
- ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքները՝ ապահովելով շինարարական ճամբարում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, զուգարան, աշղեկի աշխատասենյակ և այլն)
- շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը

- շինաշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիները:

**Առաջարկություններ օբյեկտի շինարարության
կազմակերպման վերաբերյալ**

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվում է մրցույթով:

Շենքի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից: Ավտոճանապարհների, հրապարակների և մայրերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի իրականացնել ավանդական եռանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության պետական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից: Ժամանակավոր շինությունների, ավտոկռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինությունների կիրառում ՀՀԱ միջոցների օժտմամբ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

**Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման
կազմակերպման վերաբերյալ**

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից, շաղախը և բետոնը կառաքվեն Երևանի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է լրաց պահեստավորում և տեղադրում:

Բետոնային խառնուրդը միաձույլ բետոն և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով, շաղախատարներով:

Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը իրականացվում են ինչպես շինհրապարակում, այնպես էլ մեքենայացման բազայում:

Շինարարության մատակարարումը ացեթիլենով, թթվածնով իրականացվում է կենտրոնացված եղանակով:

Շինարարության ժամկետները

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն /596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113/ ՍՆԻՊ 1.04.03-85 մաս,, II հետ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը: Կոնստրուկտիվ բնութագիրը, կառուցվում է որպես միաձույլ երկաթբետոնե սյունահեծանային հիմնակմախքով կրող համակարգ, որի արտաքին և ներքին մակերեվույթները կարկասի լցվածքի ձևով շարվում են բետոնե բլոկներով, որոնք մետաղական կեռիկներով ամրակցվում են հիմնական երկաթբետոնե կարկասին: Հիմքերը նախատեսվում է իրականացնել միաձույլ երկաթբետոնե խաչահատվող ժապավեններով. ըստ առավել համապատասխան գլուխ N 3 1. բնակելի շենքեր N 12 կետերը համաձրելով շինարարական արտաձրանքի տեխնոլոգիական առանձնահատկությունների հետ շինարարական տևողությունը սկսման օրվանից կազմում է 24ամիս շինարարության համար:

Նախագծվող դպրոցի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների (ՇՆԿ) և VEOLIA կողմից կողմից տրված (01.12.2022 թ.) տեխնիկական պայմանների համաձայն, այն է՝ ջրամատակարարումն իրականացնել Դպրոցականներ փողոցով անցնող գործող ջրագծից:

Քանի որ կոյուղու համակարգ համայնքում բացակայում է, կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական և տեխնոլոգիական սարքավորումներից ինքնահոս ձևով կհեռացվեն գոյություն ունեցող սեպտիկ հորից և պարբերաբար կհեռացվեն համապատասխան ծառայության միջոցով պայմանագրային հիմունքներով:

Արտաքին հրդեհների մարման համար նախատեսվում է հակահրդեհային հիդրանտ Հրդեհաշիջման ջրի ծախսը համաձայն նորմերի հաշվարկվում է 2 շիթ, յուրաքանչյուրը՝ 2.5 լ/վրկ: Հակահրդեհային ջրագիծն իրականացվելու է պողպատե եռակցովի խողովակներով:

Կանաչապատման աշխատանքներ նախատեսվում է համաձայն ՀՀ կառավարության 08.02.2018թվականի N108-Ն որոշման:

Նախատեսվում է ստեղծել կանաչապատ գոտի: Տնկման աշխատանքները կկազմակերպվեն նախապես իրականացնելով ծառերի փոսերի նախապատրաստման աշխատանքներ, իսկ աշխատանքները կիրականացվեն աշնանային կամ գարնանային տնկարկի շրջանում:

Կանաչապատման աշխատանքների շրջանակում կտնկվի տարածաշրջանին բնորոշ ծառեր: Կանաչապատ տարածքի հետագա խնամքը կհանձնվի դպրոցի տնօրինությանը: Ոռոգումը կիրականացվի գործող դպրոցի ջրագծից:

5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը

Մարզի տարածքը 2756 քառ.կմ, ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը կազմում է (9.3%):

Գյուղատնտեսական նշանակության հողատարածքը՝ 218,218.8 հա է (կամ մարզի տարածքին շուրջ 79.2%), որը կազմում է ՀՀ-ի՝ 2,045,472.2 հազար հա-ի 10,67 %-ը, այդ թվում՝ վարելահողեր 54,105.7 հա: Բնակավայրերի հողերը կազմում են մարզի հողերի շուրջ 6.3%, իսկ անտառային հողերը շուրջ 3.95%:

ՀՀ Արագածոտնի մարզն ընդգրկում է Աշտարակ, Ապարան, Արագած և Թալին տարածաշրջանները:

Մարզում առկա է 29 արհեստական ջրամբար՝ ամենամեծը Ապարանի ջրամբարն է՝ մակերեսը 7,9 քառ. կմ է, ընդհանուր ծավալը՝ 91 մլն.մ/խ, օգտակարը՝ 81 մլն.մ/խ, ջրթողունակությունը վայրկյանում 18 խորանարդ մետր: Ջրամբարի ամբարտակը հողային է, բարձրությունը՝ 50մ, երկարությունը՝ 200մ: Տարեկան մարզում առկա ոռոգման ջրի ծավալը կազմում է մոտ 520 մլն.մ/խ: Արագածի մերձգագաթային սարավանդի վրա գտնվում է Քարի լիճը: Նշված ծավալի ոռոգման ջրից տարեկան օգտագործվում է մոտ 85մլն.մ/խ-ն, առկա քանակության 16%-ի չափով: Մնացած քանակությունը կորչում է գոլորշիացման տեսքով կամ դուրս գալիս մարզի տարածքից: Մարզի տարածքով է անցնում Արզնի-Շամիրամ ջրանցքը, գործում է նաև Թալինի ջրանցքը:

ՀՀ Արագածոտնի մարզում մշտական բնակչության թվաքանակը կազմում է՝ 124.5հազ. մարդ այդ թվում՝ քաղաքային 26.6 հազ. մարդ, գյուղական՝ 97.9 հազ. մարդ: Ազգաբնակչության 93,7%-ը հայ են: Մարզում բնակվում են նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ հիմնականում եզդիներ և այլն:

Բնակչության մեծամասնությունը կուտակված է Աշտարակի և Ապարանի տարածաշրջաններում, բնակչության խտությունը կազմել է՝ 36-89 մարդ 1 կմ², այստեղ են բնակվում մարզի բնակչության շուրջ 64% մակերեսով կազմում է մարզի 46.5 %: Ամենացածր խտությունը՝ Արագածի տարածաշրջանում է կազմել է՝ 3 մարդ 1 կմ² և Թալինի

տարածաշրջանում կազմել է՝ 30 մարդ 1 կմ²:

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող 3 ավտոխճուղիները՝ Երևան – Աշտարակ – Թալին – Գյումրի, Երևան–Աշտարակ – Սպիտակ և Երևան – Արմավիր –Քարակերտ – Գյումրի: Մարզի տարածքը արևմտյան հատվածով հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին շուրջ 30 կմ, որը սակայն չի թողնում էական ազդեցություն մարզի տնտեսական զարգացման վրա:

Մարզի բնակչության շուրջ 87% հնարավորություն ունի օգտվելու կանոնավոր իրականացվող երթուղիներից:

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ «Թիմ» ՓԲԸ (Team ապրանքանիշ), «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ (Վիվա սելլ / USU ապրանքանիշ) և «ՅՈՒՔՈՍ» (Ucom ապրանքանիշ): Մարզի բնակավայրերը 98%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով /օպտիկամանրաթելային և եթերայինշարժական/: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Լարային հեռախոսակապ ապահովում է «Team Telecom Armenia» ՓԲԸ և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն (Ռուստելեկոմ ապրանքանիշ): Լարային հեռախոսակապով ապահովված են մարզի բնակավայրերի 88%-ը:

Մարզի 114 բնակավայրերում գործում է «Հայփոստ» ՓԲԸ մասնաճյուղերը, ապահովելով մարզի համայնքների 100% ծածկույթը:

Եթերային հեռուստահաղորդումներն իրականացվում են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ Աշտարակի, Ապարանի և Թալինի տարածքային բաժնի կողմից, ապահովելով մարզի բնակավայրերի 92% ծածկույթը:

Հեռարձակվում է թվային 8 ծրագիր, ինչպես նաև Աշտարակում՝ կաբելային «ԱշտարակԷլիտTV» տեղական ծրագրերը: Մարզի ամբողջ տարածքը ընդգրկվել է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է նաև «Հանրային ռադիոն», որը հասանելի է մարզի բոլոր բնակավայրերում:

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին և ապահովված են հիմնականում անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարմամբ: Մարզում առկա է էլեկտրաէներգիայի բաշխման զարգացած ցանց:

Ներկայումս ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն, Արագածոտնի մարզում տարեկան 38.9 մլն. կՎտժ էլեկտրական էներգիա են արտադրում 6 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ մոտ 15.95 ՄՎտ ընդհանուր հզորությամբ, որը կազմում է Հայաստանի ՓՀԵԿ երի արտադրած ընդհանուր 977 000 ՄՎտժ էներգիայի շուրջ 4%:

Գազաֆիկացման մակարդակը մարզում բավականին ցածր է, 114 համայնքներից 61-ը (53.5%) գազաֆիկացված են, որտեղ բնակվում են մարզի բնակիչների շուրջ 63.9 %:

Մարզի տարածքում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման համար գործունեություն է իրականացնում

«Էկոլոգիա ՎԿՀ-ի» ՍՊԸ-ն, որը մարզի և հանրապետության այլ վայրերի բուժսպասարկման կազմակերպություններից՝ պայմանագրային սկզբունքով, հավաքում, տեղափոխում, պահպանում և վնասագերծում է ժամկետանց դեղորայքի, բժշկական կոշտ և հեղուկ, ինչպես նաև վիրահատություններից առաջացած թափոնները:

Միննույն ժամանակ կոշտ կենցաղային թափոնների համար թվով 59 համայնքներում կատարվել է հողհատկացում, սակայն փաստացի գործում է 9 աղբավայր: Աղբահանությունը մասնագիտացված բեռնատարերով իրականացվում է միայն քաղաքային բնակավայրերում, մասնակի կերպով, իսկ գյուղական բնակավայրերում միայն հարմարեցված տեխնիկական միջոցներով (ինքնաթափեր, լաֆետներ, այլ):

Մարզի բոլոր քաղաքներն ունեն կոյուղու համակարգ, որը սակայն միացված չէ գործող մաքրման կայաններին:

ՀՀ Արագածոտնի մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռող արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են:

Արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ըմպելիքի արտադրություն և կան խաղողի վերամշակման և գինու հումքի ստացման) ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում:

Արդյունաբերական արտադրանքը 2021թ.-ի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 44182.2մլն.դրամ, արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը՝ 97.6%: Ըստ արդյունաբերական արտադրանքի ծավալը ըստ արտադրության բաժինների ներկայացված է հետևյալ կերպ.

- հանքագործական արդյունաբերություն – 2010.7մլն.դրամ,
- մշակող արդյունաբերություն – 37565.8մլն.դրամ,
- էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում – 4138.5մլն.դրամ, - ջրամատակարարում, կոյուղի և թափոնների կառավարում և վերամշակում – 467.2մլն.դրամ:

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների ներկայացված է ստորև աղյուսակ 3.1-ում:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես հացահատիկային մշակաբույսերի արտադրություն) և անասնաբուծության մեջ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ
PRODUCTION OF INDUSTRIAL OUTPUT BY TYPES OF ECONOMIC ACTIVITY, 2020**

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, ¹ մլն.դրամ Volume of produced production, in current prices ¹ , mln.drums	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, ¹ մլն.դրամ Realisation of fabricated products in current prices ¹ , mln.drums	Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, % Volume index of of industrial production, %	
ԱՐԱԳԱՏՈՏՆԻ ՍԱՐԶ ARAGATSOTN MARZ				
<i>Ամբողջ արդյունաբերությունը</i>	44 182.2	44 227.2	97.6	<i>Total industry</i>
<i>այդ թվում՝</i>				<i>including:</i>
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	2 010.7	1 983.6	121.9	Mining and quarrying
<i>այդ թվում՝</i>				<i>including:</i>
հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	2 010.7	1 983.6	121.9	other mining and quarrying
Մշակող արդյունաբերություն	37 565.8	37 637.8	96.5	Manufacturing
<i>որից՝</i>				<i>of which :</i>
սննդամթերքի արտադրություն	25 917.9	25 867.3	103.8	manufacture of food products
խմիչքների արտադրություն	6 438.8	7 214.1	105.5	manufacture of beverages
թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	28.3	28.3	141.7	printing and reproduction of recorded media
քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	302.6	308.9	4.4 անգ times	manufacture of chemicals and chemical products
ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	845.4	874.2	127.2	manufacture of rubber and plastic products
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	128.2	129.7	82.6	manufacture of other non-metallic mineral products
համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն	114.0	114.0	94.3	manufacture of computer, electronic and optical products
մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	235.5	235.5	244.9	manufacture of machinery and equipment n.e.c.
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	3 395.0	2 705.7	46.4	manufacture of jeweller products
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	4 138.5	4 138.5	96.8	Electricity, gas, steam and air conditioning supply
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	467.2	467.2	108.2	Water supply, sewerage, waste management and remediation activities

Գյուղատնտեսական համախառն արտադրանքում բուսաբուծությունը կազմում է 35.2մլն.դրամ, անասնաբուծությունը՝ 47.3մլն.դրամ:

Հացահատիկային և հատիկաբնդեղենային մշակաբույսերի ցանքաստաբաժությունները կազմել են 17560հա, բերքատվությունը՝ 14.6ց/հա, համախառն բերքը՝ 40.9հազ.տոննա:

Կարտոֆիլի ցանքաստարածությունները կազմել են 1062հա, բերքատվությունը՝ 268.2g/հա, համախառն բերքը՝ 28.5հազ.տոննա:

Բանջարանոցային մշակաբույսերի ցանքաստարածությունները կազմել են 557հա, բերքատվությունը՝ 139.0g/հա, համախառն բերքը՝ 10.9հազ.տոննա, բոստանային կուլտուրաների համար համապատասխանաբար՝ 83հա, 141.8g/հա, 1.2հազ.տ: Պտղի և հատապտղի տնկարկների համար այդ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար 6232հա, 84.3g/հա և 49.1հազ.տոննա, խաղողի տնկարկների համար՝ 1409հա, 135.6g/հա և 16.8հազ.տոննա:

Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմել է 71.3հազ.գլուխ, որից կովերինը՝ 33.8հազ.գլուխ, խոզերինը՝ 15.6հազ.գլուխ, ոչխարներ և այծեր՝ 87.8հազ.գլուխ, ձիեր՝ 0.4հազ.գլուխ:

Իրացվել է 20.4հազ.տ կենդանի և թռչուն սպանդի համար, 76.3 տոննա կաթ, 81.0մլն.հատ ձու, 148.0տոննա բուրդ:

Մանրածախ առևտրի շրջանառությունը կազմել է 22564.8մլն.դրամ, ծառայությունների ծավալը՝ 12079.8մլն.դրամ, կացության և հանրային սննդի օբյեկտների շրջանառությունը՝ 519.4մլն.դրամ, առողջապահությունն ու բնակչության սոցիալական սպասարկումը՝ 213.4մլն.դրամ, ֆինանսական և ապահովագրական գործունեությունը՝ 9419.7մլն.դրամ:

Գործազուրկների թիվը կազմել է 5.5հազ.մարդ, որից կանայք՝ 1.4հազ.մարդ: Մարզում միջին ամսական անվանական աշխատավարձը եղել է 119464դրամ: Կենսաթոշակառուների գրանցված քանակը՝ 151 մարդ, կենսաթոշակի միջին չափը՝ 41856դրամ:

Նախադպրոցական հաստատությունների քանակը կազմել է 26, հաճախող երեխաների քանակը՝ 1385, մանկավարժների քանակը՝ 274, մեկ մանկավարժին ընկնող երեխաների թվաքանակը՝ 5.1:

2020/2021 ուսումնական տարում Արագածոտնի մարզում գործել է 120 հանրակրթական դպրոց, աշակերտների թվաքանակը 18366, մանկավարժների թվաքանակը՝ 2102, մեկ մանկավարժին ընկնող աշակերտների թվաքանակը՝ 8.7:

Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների քանակը 2020/2021 ուսումնական տարում կազմել է 12, աշակերտների թվաքանակը՝ 130:

Գործել են նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական 3 հաստատություններ, դրանցում կրթվել են 235սան, աշխատել են 71 մանկավարժ:


Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը կազմել է 1, ուսանողների թվաքանակը՝ 62, մանկավարժների թվաքանակը՝ 21, ուսանողների թվաքանակը մեկ մանկավարժի հաշվով՝ 3.0:

Գործում են 1 թանգարան և 52 գրադարան:



5 մարզական կազմակերպություններում մարզվում են 569 մարզիկ, օլիմպիական մարզաձևերով խմբերի քանակը՝ 45, ոչ օլիմպիական մարզաձևերով՝ 2:

Շրջանի լանջերի թեքության և լեռների երկրաձևաբանական սխեմատիկ

քարտեզները ներկայացված են ստորև:




Նկար 2. Երկրաձևաբանական քարտեզ



Սկար 3. Մակերևույթի գերակշռող թերություններ

Նկար 4. ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ




Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը

ՀՀ-ն գտնվում է մերձարևադարձային գոտու հյուսիսային լայնություններում և բնութագրվում է չոր ցամաքային կլիմայով ու կլիմայական հակադրություններով: ՀՀ կլիմայի վրա մեծ է հարակից տարածքների՝ Մեծ Կովկասի, Իրանական ու Փոքրասիական բարձրավանդակների, արաբական անապատների, Սև և Կասպից ծովերի ազդեցությունը: ՀՀ տարածքին բնորոշ է արևոտ կլիման:

ՀՀ-ում տարվա ընթացքում տիրապետում են մերձարևադարձային գոտուն բնորոշ արևմտյան օդային հոսանքները, որոնք լեռնային ռելիեֆի պայմաններում փոխում են իրենց բնույթը և պայմանավորում քամիների բազմազանությունն ու ռեժիմը: Ըստ բարձրության՝ մեծանում է քամու արագությունը:

Շրջանի կլիման չոր մայրցամաքային է, ձյունառատ, բայց երկարատև ձմեռով և շոգ ամառով:



Նկար 5. Կլիմայական գոտիների քարտեզ

Աղյուսակներում բերված են տեղի կլիմայական պայմանները ըստ Ապարան օդերևութաբանական կայանի տվյալների:

Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	Բարձ. ծովի մակեր. մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան կտրվածքով	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Ապարան	1889	-8.8	-7.6	-3.0	4.4	9.6	13.3	16.8	16.9	12.7	6.7	0.5	-5.7	4.7	-34	33

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	Հստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
Ապարան	74	72	69	66	66	65	63	61	60	66	72	75	67	66	42

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Ձնածածկույթ			
	Հստ ամիսների												Տարեկան	Տասնօրյա առավելագույնը, մմ	Օրերի թիվը	Ձրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Ապարան	40	49	62	78	90	88	74	56	40	49	51	46	723	121	126	664
	34	49	53	59	70	84	78	79	75	44	87	42	87			

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնաբուքում լին ճնշում, մմ	Սնվումներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Սննդամթերքների կրկնելիություն, %	Միջին ստանդարտ արագություն, մ/վ	Միջին տարեկան արագություն, մ/վ	Միջին տարեկան ընթացիկ քանակ (15/վ օրերի քանակը)	Հասնելիություն, մ/վ		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրև)	Արևելյան (Արև)	Հարավարևելյան (ՀվԱրև)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրևմ)	Արևմտյան (Արևմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրևմ)					20	50	100
															16	17	18
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Ապարան	810.2	Հունվար	5	7	26	21	8	2	11	20	46	2.0	2.1	19	22	23	24
			3.6	2.4	2.8	2.7	3.9	2.7	3.3	3.5							
		Մայրիլ	5	6	14	19	16	5	15	20	33	2.3					
			3.2	2.8	2.8	2.9	3.5	3.0	3.3	3.1							
		Հուլիս	8	14	10	13	9	2	19	25	33	2.1					
			2.7	3.0	2.6	2.4	2.5	2.1	2.6	2.5							
		Հոկտեմբեր	5	5	10	20	15	3	17	25	43	1.8					
			3.0	2.1	2.4	2.6	2.7	2.2	3.2	2.9							

Քանու պարամետրերը

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնաբուքում լին ճնշում, մմ	Սնվումներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Սննդամթերքների կրկնելիություն, %	Միջին ստանդարտ արագություն, մ/վ	Միջին տարեկան արագություն, մ/վ	Միջին տարեկան ընթացիկ քանակ (15/վ օրերի քանակը)	Հասնելիություն, մ/վ		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրև)	Արևելյան (Արև)	Հարավարևելյան (ՀվԱրև)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրևմ)	Արևմտյան (Արևմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրևմ)					20	50	100
															16	17	18
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Ապարան	810.2	Հունվար	5	7	26	21	8	2	11	20	46	2.0	2.1	19	22	23	24
			3.6	2.4	2.8	2.7	3.9	2.7	3.3	3.5							
		Մայրիլ	5	6	14	19	16	5	15	20	33	2.3					
			3.2	2.8	2.8	2.9	3.5	3.0	3.3	3.1							
		Հուլիս	8	14	10	13	9	2	19	25	33	2.1					
			2.7	3.0	2.6	2.4	2.5	2.1	2.6	2.5							
		Հոկտեմբեր	5	5	10	20	15	3	17	25	43	1.8					
			3.0	2.1	2.4	2.6	2.7	2.2	3.2	2.9							

Օդային ավազան

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից: ՊՈԱԿ-ը մշտական վերահսկողություն է կատարում 16 ստացիոնար դիտակայանների միջոցով, որոնցից 6 ստացիոնար դիտակայանում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվում են շուրջօրյա ավտոմատ դիտարկումներ:

2022 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Զարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և գետնամերձ օզոնի պարունակությունները: Համաձայն իրականացված արդյունքների 2023 թվականին 2022 թվականի

համեմատությամբ քաղաքների մթնոլորտային օդում հիմնականում բարձրացել է ազոտի երկօքսիդի պարունակությունը²:

Քանի որ համայնքում կամ հարակից բնակավայրերի տարածքում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ տեղադրված չեն և մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան, ապա որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանի աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար ՊՈԱԿ-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-նուղեցույց³: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են:

Փոշի՝ 0.071 մգ/մ³;

Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ³;

Ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ³;

Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³:

Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO ₂)	Ազոտի երկօքսիդ (NO ₂)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված Նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) համեմատությամբ:

2022 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և գետնամերձ օզոնի պարունակությունները: Համաձայն իրականացված արդյունքների 2022 թվականին 2021 թվականի համեմատությամբ քաղաքների մթնոլորտային օդում հիմնականում բարձրացել է ազոտի երկօքսիդի

պարունակությունը:

Ջրային ռեսուրսներ

Շրջանի հիմնական ջրային արտերիան հանդիսանում է Քասախ գետը իր Ամբերդ և Շահվերդ վտակներով, որը հոսում է բազալտների և անդեզիտաբազալտների մեջ առաջացած խոր կիրճով: Գետերը սնվում են անձրևաջրերով և ձնհալով, բնութագրվում են խիստ արտահայտված սեզոնային անհավասարաչափ ռեժիմով:

Շրջանի ջրային ավազանում մեծ դեր ունեն նաև բազմաթիվ աղբյուրները, որոնք Քասախ գետի կիրճում դուրս են գալիս լավային հոսքերի տակից:

Աշխատանքների արդյունքում պարզվել է, որ տարածքը գործնականում ջրագուրկ է, այստեղ բացակայում են աղբյուրները, ջրհորները, մշտահոս գետերը, ինչպես նաև բացակայում են ստորերկրյա ջրերը:



ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի մշտադիտարկում իրականացվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

Ըստ ՊՈԱԿ վերջին 2022 թվականի ամփոփագրի Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև, Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Աշտարակ քաղաքից վերև՝ ֆոսֆատ իոնով, մոլիբդենով, վանադիումով և երկաթով:

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային, այդ թվում նաև Սևանա լճի ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի 75-Ն որոշման: Գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնաստնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակ «լավ»-ից «անբավարար» որակի է (2-4-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ գետին խառնվելու արդյունքում դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով: Հատկապես աղտոտված է Փամբակ գետը Վանաձոր քաղաքից հետո, Հրազդան գետը՝ Երևան քաղաքից հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Ախուրյան գետը՝ Գյումրի քաղաքից հետո, Կարկաչուն գետը՝ գետաբերանի հատվածում, Մեծամոր գետը՝ Քասախ գետի խառնվելուց հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Քասախ գետը՝ Ապարան քաղաքից հետո, Գետառ և Մարմարիկ գետերը՝ գետաբերանի հատվածներում, Վարարակ գետը՝

Գորիս քաղաքից ներքև հատվածում և Երևանյան լիճը:



ՀՀ մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտագանց

43	Քասախ	Հրազդան	Արագածոտն	0.5 կմ ք. Ապարանից վերև
44	Քասախ	Հրազդան	Արագածոտն	0.5 կմ ք. Ապարանից ներքև
45	Քասախ	Հրազդան	Արագածոտն	1 կմ ք. Աշտարակից վերև
46	Քասախ	Հրազդան	Արագածոտն	3.5 կմ ք. Աշտարակից ներքև
47	Քասախ	Հրազդան	Արմավիր	Գետաբերան

Կենսաբազմազանություն

Տարածաշրջանը գտնվում է Իրանական բուսաբանաաշխարհագրական ֆլորիստական շրջանում: Հյուսիս-արևմուտքից այդ շրջանը բաժանվում է Հայկական լեռնաշխարհի ֆլորիստական շրջանից Արագածի նախալեռներով: Արևելքում Իրանական շրջանը կտրուկ անջատվում է Հայկական լեռնաշխարհից Գեղամա և Զանգեզուրի լեռնաշղթաների ջրբաժաններով: Այնուհետ, սահմանը անցնում է Բարգուշատի և Զանգեզուրի լեռնաշղթաներով: Հարավից և արևմուտքից Իրանական շրջանը դուրս է գալիս Հայաստանի սահմաններից դուրս և մեծ տարածքներ զբաղեցնում Հյուսիսային Պարսկաստանում, Նախիջևանում և Թուրքիայում:

Բուսական աշխարհը ներկայացված է Շիրակյան և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև

ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկային և հատիկա-տարազգի ներկայացուցիչները: Համաձայն Ապարան քաղաքի գլխավոր հատակագծի, տարածաշրջանում անդեզիտաբազալտային և տուֆալավային մայր ապարների վրա տարածված տարավացված տիպիկ և սովորական սևահողերով տափաստանային տարածքներում կարելի է հանդիպել մոտ 150 բուսատեսակ: Դրանցից որպես դոմինանտ կամ բնորոշ տեսակներ կարելի է նշել շյուդախոտը (*Festuca sulcata*), բարձրավենյակը (*Artemisia austriaca* Jack), կելերիան (*Koeleria nitidula* Vel), ուրցի տեսակները (*Thymus*), այծակնը (*Aegilops cylindrical* Host), քոսքոսկը (*Scabiosa virgata* Gross) , հազարատերևուկը (*Achillea micranta* M.B.) և այլն:

Անմիջապես հայցվող տարածքը գործնականում զուրկ է բուսածածկից: Համաձայն գրականության տվյալների այստեղ չեն հանդիպում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ:

Կենդանական աշխարհ

Տարածաշրջանում տարածված են լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Սակայն, այստեղ հանդիպում են նաև արտագոնալ բնակավայրերին (կմախքային լեռներ, քարաթափեր, ցանքսեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ: Համաձայն հրապարակված տվյալների, այս լանդշաֆտային գոտում տարածված են 113 տեսակի ողնաշարավոր կենդանիներ, որոնցից 82-ը հանդիպում են նաև արտագոնալ բնակատեղերում, այդ թվում՝ 28 կաթնասուն, 67՝ թռչուն, 15՝ սողուն և 3՝ երկկենցաղ: Կաթնասուններն առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով: Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվող տեսակներ:

Տվյալ տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված սպիտակատամիկը (*Crocidura*), գայլը (*Canis lupus*), աղվեսը, (*Vulpes vulpes*), գերմանամուկը (*Cricetus auratus* Nat), դաշտամուկը (*Mucrotus arvalis* Pall.), կաքավը (*Perdix perdix* L.), կռունկը (*Grus grus* L.) և այլն:

ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված Մեծ ենթարծիվ-*Aquila clanga* տեսակը հանդիպում է տարածաշրջանում: Հայցվող տարածքում այն չի հանդիպում:

Մեծ ենթարծիվ-*Aquila clanga*- Տարածվածություն

Հանդիպում է Գերմանիայից և Բալկանյան թերակղզուց մինչև Ամուրի հովիտ, Արևելյան Տյան-Շանում, Կովկասում և Հյուսիսարևմտյան Հնդկաստանում: Չմեռում է արավարևելյան Անդրկովկասում, Իրանում, Մետապոտամիայում, Հնդկաստանում, Մյանմայում, Հարավային Չինաստանում և Եգիպտոսում: Հայաստանում հանդիպում է լեռնատափաստանային գոտու նախալեռներում, առավելապես հանրապետության հյուսիսային մասում:

Էկոլոգիա-Չուի շրջանում գերադասում է բաց տարածքները՝ դաշտերը, լեռնային տափաստանների,

մարգագետինների խոպան և ճահճացած հատվածները և կարող է հանդիպել այլ արծիվների հետ նույն խմբերում:

Պահպանություն-Քիչ քանակությամբ հանդիպող, խոցելի տեսակ է, որը Հայաստանում հանդիպում է հիմնականում չուի ընթացքում: ԲՊՄՄ Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես խոցելի տեսակ:

Թվաքանակի և դրա փոփոխության հավաստի տեղեկությունները բացակայում են: Հանդիպում է տեղ-տեղ գարնանային և աշնանային չուի շրջաններում: Նկատվում է թվաքանակի խիստ կրճատում ամբողջ արեալում:

Վտանգման հիմնական գործոններն են փոքր թվաքանակը, որսագողությունը և ապրելավայրերի քայքայումը տնտեսական գործունեության արդյունքում:

Պահպանության հատուկ միջոցառումներ չեն իրականացվում:

Անմիջապես տարածքում վայրի կենդանիների ապրելավայրեր չեն հայտնաբերվել: Համաձայն գրականության տվյալների այստեղ չկան ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներ:

Դպրոցի տարածքում ոռոգման ցանցը բացակայում է:

Տարածաշրջանի վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Դիտարկվող տարածքը չի առնչվում բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքների հետ:

Տարածաշրջանի բնական էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումը ապահովելու նպատակով տարբեր ժամանակահատվածներում շրջակա տարածքներում կազմակերպվել են մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքներ:

ՀՀ Արագածոտնի մարզի բնության հուշարձանների ցանկը համաձայն ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008 թվականի N 967-Ն՝

Երկրաբանական հուշարձաններ

ՀՀ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1.	«Տափակ Բլուր» լիպարիտային գմբեթ	Արագածոտնի մարզ, Արեգ գյուղից 2.0 կմ հվ-արմ
2.	«Բազալտե արև», եզակի ճառագայթածև անջատում	Արագածոտնի մարզ, Բյուրական գյուղից 7 կմ հս, Արխաշան գետի ձախափնյա մասում Ամբերդ ամրոցի մոտ
3.	«Տատիկ» քարե բնական քանդակ	Արագածոտնի մարզ, Դաշտադեմ գյուղի հվ-արլ եզրին
4.	«Փոքր Արտենի» հրաբուխ	Արագածոտնի մարզ, Բարոժ գյուղից 2.5 կմ հվ-արմ
5.	«Քարե կարկուտ» տեքստուրային	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից մոտ 3.0 կմ հս-արմ

	առանձնահատուկ ներփակումներ	
6.	Արայի լեռան խառնարանը	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղից 6 կմ հս-արլ
7.	«Անանուն» ժայռ-մնացուկներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4.5 կմ հվ-արմ, Արայի լեռ, հրաբխի հարավային լանջերին
8.	«Անանուն» էրոզիոն աշտարակ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4 կմ արմ, Արայի լեռան հրաբխի խառնարանում
9.	«Չինգիլային դաշտ» քարե կուտակումներ	Արագածոտնի մարզ, Քուչակ գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, «Էլոյի բերդ» տանող ճանապարհին
10.	«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, բնապատմական համալիր Մեծ Արտենի (2047մ) լեռ, քարեդարյան (օլիգոցեն) հասակի եզակի հնագիտական հուշարձաններ

Ջրաերկրաբանական հուշարձաններ

1.	«Սրբի» կամ «Քառասուն» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ապարան քաղաքի կենտրոնում, ծ.մ-ից 1870 մ բարձրության վրա
2.	«Քյահրիզ» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 8.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսի վերի եզրին
3.	«Գեղաձոր» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 7.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսում, 9 մ-ից 3000 մ բարձրության վրա
4.	«Ջաղացի» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ղազարավան գյուղի հարավային ծայրամասում, ծ.մ-ից 1180 մ բարձրության վրա

Ջրագրական հուշարձաններ

1.	«Ամբերդ» լիճը	Արագածոտնի մարզ, Բյուրականից մոտ 2.1 կմ հս-արմ, Արագած լեռան հվ-արմ մերձկատարային սարավանդին
2.	«Լեսինգ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 11 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի հս-արլ լանջին
3.	«Ումրոյ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 8 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի արլ լանջին
4.	«Գեղարոտի» ջրվեժ	Արագածոտնի մարզ, Արագած գյուղից 11 կմ հս-արմ

Բնապատմական հուշարձաններ

1.	«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, Բարոժ գյուղից 2 կմ հվ-արմ
2.	«Արտաշավան» բնապատմական համալիր	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղի արլ եզրին
3.	«Աստվածընկալ» հրաբխային տուֆերի ստվարաշերտ	Արագածոտնի մարզ, Հարթավան գյուղից մոտ 4 կմ դեպի արլ, Քասախ գետի կիրճի աջ լանջին
4.	«Քասախի դարավանդներ»	Արագածոտնի մարզ, Օհանավան գյուղի արլ եզրին
5.	«Քասախի կիրճ»	Արագածոտնի մարզ, Սաղմոսավան գյուղ

Պատմամշակութային հուշարձաններ և բնության հուշարձաններ

Բնության հուշարձանը գիտական, պատմամշակութային և գեղագիտական առանձնահատուկ արժեք ներկայացնող բնական օբյեկտ է, որի պահպանության ռեժիմը սահմանվում է ՀՀ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 19-րդ հոդվածի պահանջներով:

ՀՀ կառավարության 2008 թ. օգոստոսի 14-ի թիվ 967-Ն «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքում գտնվող բնության հուշարձանների ցանկը: Ցանկում ընդգրկված է 233 գտնվող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական և կենսաբանական բնության հուշարձաններ:

Այս հոդվածը ներկայացնում է Արագածոտնի մարզի Վարդենուտ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից[1]: Ցանկում ներառված է ընդամենը 12 հուշարձան (6 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Ամրոց	11-14 դդ.	հվ-ամ մասում
Գերեզմանոց	13-20 դդ.	հվ-ամ մասում
Եկեղեցի	19 դ.	գ. մ.
Եկեղեցի Սբ. Աստվածածին	17 դ.	հվ մասում
Գերեզմանոց	17-20 դդ.	
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածների	1970 թ.	գ. մ.
Մատուռ Թուխ Մանուկ	13 դ.	գ. մ.
Խաչքար	10 դ.	
Խաչքար	11-12 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	

Ազդակիր համայնք

Վարդենուտ, գյուղ Հայաստանի Արագածոտնի մարզում, Արագած լեռան հարավային լանջին:
Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 16 կմ հյուսիս, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1900 մետր: Գյուղը հիմնադրվել է 1831 թվականին:

Աշխարհագրական դիրքը՝

Գյուղը գտնվում է Ապարանից 9 կիլոմետր հարավ: Արևելքից գյուղի սահմանները սկսվում են Արագած սարի գագաթատակից և ուղիղ իջնում է Արագած և Շենավան գյուղերի հողերին զուգահեռ, հասնում Ապարան-Երևան մայրուղուն և ճանապարհին զուգահեռ առաջանում դեպի Ափնագյուղ, ապա հարավից հյուսիս անցնելով Արա (գյուղ)ի կողքով ձգվում է մինչև Արագած սարի գագաթատակը: Գյուղի միջով այն երկու մասի բաժանելով հոսել է Գեղարոտ գետակը: Այդ գետակի ջրերով էլ ջրվել են գյուղի թե դաշտերը, թե բանջարանոցները: Ցավոք 1980-ական թվականներին գետակի հունը փոխելով՝ ջրերը տարվել են դեպի արևելք՝ դեպի Ապարանի ջրամբար: Գետակի պատմական հունը ներկայումս ծառայում է գարնան ձնհալի ջրահեռացման համար: Գյուղի միջով է անցնում Ապարան-Երևան մայրուղու Քուչակ գյուղից սկսվող Քուչակ-Ծաղկաշեն-Արագած (Ապարանի տարածաշրջան)-Վարդենուտ-Արա (գյուղ) ավտոճանապարհը, որը Ափնագյուղի մոտ կրկին միանում է Ապարան-Երևան մայրուղուն:

Կլիմա

Կլիման զով է, ամառանոցային:

Բնակչություն

Վարդենուտի բնակչության մի մասի նախնիները գաղթել են Պարսկահայաստանի տարբեր շրջաններից և Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի ու Մուշի գյուղերից: Վարդենուտի ազգաբնակչության փոփոխությունը.

Տարի	1831	1897	1926	1939	1959	1970	1979	1989	2001	2011
Բնակիչ	314	961	883	1172	756	964	699	696	852	895

Տնտեսություն

Բնակիչները զբաղվում են անասնապահությամբ, հացահատիկի, կերային, բանջարանոցային կուլտուրաների, պտղատու ծառերի մշակությամբ: Գյուղն ունի դպրոց, մշակույթի տուն, հեռախոսակայան:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կանխատեսվում են շինարարության փուլում, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության տևողությամբ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով դպրոցի կառուցապատվող տարածքը: Բոլոր ազդեցությունները գնահատվում են կառավարելի՝ բնապահպանական միջոցառումների պլանում մշակված միջոցառումների արդյունավետ իրականացման դեպքում:

a. Շինարարության փուլ,

i. Օդային ավազանի աղտոտվածություն

Ծրագրի ընթացքում հիմնականում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ հողային աշխատանքների ընթացքում: Փորման, բեռնման, կառուցապատման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

$$Q = K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_6 \times B \times G \times 10^6 / 3600, \text{ գ/վ}$$

որտեղ՝

K_1 –ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K_2 –ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէռոզոլային մասնիկների, 0.02

K_3 –ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.8

K_4 –ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K_5 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K_6 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G –ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է մոտ 24 ամիս կամ

24 ամիս x 22 օր x 8 ժամ = 4224 ժամ/շինարարություն :

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը կազմում է 12253 խմ կամ 22056 տ:

22056 տ. /704 ժամ=31,33 տ/ժամ

$$Q = (0.05 \times 0.02 \times 1.8 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 31.33 \times 10^6) / 3600 = 0.376 \text{ գ/վ}$$

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի՝

$$0.376 \text{ գ/վ} \times 704 \text{ ժ/շ} \times 3600 \text{ վ} / 10^6 = 0.95 \text{ տ}$$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված և չեն դիսպերսվի դպրոցի սահմաններից դուրս՝ հաշվի առնելով մասնիկների մեծ չափերը և նրանց արագ գրավիմետրիկ նստեցումը: Հետևաբար, կանխատեսվում են, որ արտանետումները չեն գերազանցի թույլատրված նորմերը, իսկ հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կբացառվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացմամբ /տե՛ս Հավելված 1, ԲԿՊ, 5.1-Օդի աղտոտման և փոշու կառավարում/, մասնավորապես՝ շինարար կապալառուն պարբերաբար կիրականացնի շինարարական հրապարակի ջրցանում, շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ և սահմանափակ արագությամբ (չի գերազանցի 30կմ/ժ արագությունը):

Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափագրումներ, որոնք կհամեմատվեն գործող

օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման ընթացքում նախատեսվում է հաշվի առնել ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն և 2024 թվականի փետրվար 12-ի թիվ 50-Ն հրամանների պահանջները:

ii. Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աղմուկի մակարդակներ գնահատվում են շինարարության ընթացքում, աղմուկի հնարավոր մակարդակները չեն գերազանցի ՀՀ ազգային նորմերը: Աղմուկի մակարդակը կկառավարվի համապատասխան մեղմացնող միջոցառումների իրականացմամբ / տե՛ս Հավելված 1, ԲԿՊ, 5.2-Աղմուկի և թրթռումների կառավարում/: Հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ:

Տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝

Ավտոտրանսպորտը և շինարարությունը

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ հանդիսանում է գյուղը, որը գտնվում է հայցվող տարածքից զգալի հեռավորության վրա:

Քանի որ մոտակա գյուղը գտնվում է աղմուկի աղբյուրից բավականին հեռու, ապա աղմուկի մակարդակը հաշվարկվում է սանիտարա-պաշտպանիչ գոտու սահմանին (հեռավորությունը աղմուկի աղբյուրից 500մ):

Տարածքում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը $LA_{էկվ}$ սահմանված է 79ԴԲԱ (համաձայն գործող նորմերի):

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ}$$

Որտեղ՝

$$LA_{էկվ} - \text{աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, } LA_{էկվ} = 79 \text{ ԴԲԱ}$$

$\Delta LA_{հեռ}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված

$$\Delta LA_{հեռ} \text{ 500մ-ի վրա կազմում է 28 ԴԲԱ}$$

$$\Delta LA_{էկր} - \text{աղմուկի մակարդակի նվազումը էկրանով: } \Delta LA_{էկր} = 14 \text{ ԴԲԱ}$$

Կրթահամալիրի տարածքը տվյալ դեպքում ծառայում է որպես էկրան:

$\Delta LA_{կանաչ}$ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ շուրջով,

$$\Delta LA_{կանաչ} = 0 \text{ ԴԲԱ}$$

Աղմուկի մակարդակը սանիտարա-պաշտպանիչ

գոտու սահմանին կկազմի՝ $LA_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ} = 79 - 28 - 14 = 37 \text{ դԲԱ}$

Հաշվի առնելով կրթահամալիրի հեռավորությունը մոտակա բնակավայրերից մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից /45ԴԲԱ/ շատ ցածր:

Աղմուկի մակարդակը գիշերային ժամերին գտնվում է նորմերի սահմաններում և կազմում է 32 դԲԱ (նորման 35 դԲԱ):

iii. Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինաշխատանքների կազմակերպման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար:

Շինաշխատանքների ընթացքում առաջացած հնարավոր փոշու մակարդակները կնվազեցվեն ջրցանի իրականացմամբ:

Ջրօգտագործման հաշվեկշիռ

Անվանում	չափ. Միավ.	չափ. Միավ.	Հիմք	Միավ. Ծավ.	Պահանջվող որակ	Ծավալ մ3/օր խմելու.	Ծավալ մ3/օր տեխնիկ
1	2	3	4	5	6	7	8
Տնտեսական/կենցաղային կարիքներ							
Կենցաղային ցնցուղ-վացարան	1աշխատ.	23	Пособие к СНиП 3.01.01-85	0.016	խմելու.	0.368	

Կենցաղային	Ի	46		0.025	խմելու.	0.75	
Դողերի լվացում	մեքենա հատ	10		0.14	տեխնիկական		1.40
Բետոնի պատրաստ.	Բետոն մ3	3.0		0.72	խմելու.	2.16	
Բետոնի խնամք	ջրում,մ3	20		0.0314	խմելու.	0.63	
Շինհրապար ակի մաքրում	ջրում,մ2	800,0		0.004	տեխնիկական		3.20
Շնամենը`						3.91	4.6

Ազդեցություններ ջրային համակարգի վրա չեն կանխատեսվում, քանի որ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ՝ բացառելով շին-մեքենաների երթևեկության ընթացքում հնարավոր արտանետումները: Բացի այդ շինարարական աշխատանքների ընթացքում հոսքաջրերի առաջացում չի կանխատեսվում՝ հաշվի առնելով դրանց բնույթը, բացի այդ աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները տարածքից:

Հնարավոր կեղտաջրերի առաջացման դեպքում հրապարակում կպահվի կեղտաջրերի հեռացման համար նախատեսված տարա (≥ 3 խ.մ տարողունակությամբ), որտեղ կեղտաջրերի (բետոնաջրեր և այլն) հետերոգեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս հնարավոր կլինի շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում: Կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են Հավելված 1.-ում:

iv. Թափոնների առաջացում և կառավարում

Շինարարական աղբի՝ առաջացած գրունտի կուտակումը կարող է հանգեցնել հողային համակարգի արտաքին շերտի աղբոտվածության: Նշված ազդեցություններից խուսափելու համար շինաղբը ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում կանոնավոր կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև կանոնավոր կերպով (ամենաուշը երեք օրը մեկ) տեղափոխվելու համայնքային աղբավայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում, մասնավորապես՝ դպրոցի տարածքի բարեկարգման աշխատանքների ընթացքում գնահատվում են IV և III դասի վտանգավորության թափոնների առաջացում՝ ստորև ներկայացվող տեսակային կազմով.

Թափոնի անվանումը	Ծածկագիրը	Վտանգավորության դասը
ասֆալտի և ասալտբետոնի խառնուրդի մնացորդներ	31401200 01 00 4	IV
Կտորների տեսքով կոշտ ասֆալտբետոնի և ասֆալտբետոնի խառնուրդներ	31403502 01 00 4	IV
«Կնցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)»	91200400 01 00 4	IV
«Սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ»	54101100 02 03 3	III
«Բանեցված շարժիչի յուղերի թափոններ»	54100201 02 03 3	III

31602500 04 00 4` հողային ավազային շլամ, խրամատների հանվածքներ`
 Հողային ծավալներն են` հանույթ 8 600 խ/մ, հետլիցք 5860 խ/մ

Գործունեության ընթացքում գոյացած շինարարական աղբը գնահատվում է շուրջ 2740խմ :

Գործունեության ընթացքում գոյացած կենցաղային աղբը (գնահատվում է ≤ 3 կգ/օր) կհավաքվի հրապարակում տեղադրվող կենցաղային աղբի համար նախատեսվող փակ տարաներում և կանոնավոր կերպով կհեռացվի հասարակական աղբամաններ:

Շինարարության ողջ ընթացքում առաջացող յուղերի բանեցված մնացորդները (գնահատվում են ≤ 20 լ) կհավաքվեն և կպահվեն հերմետիկ փակ և մետաղական տարաներում, իսկ հետագայում կհանձնվեն վերջիններիս վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության: Հրապարակում քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները, որոնք լիցքավորվում են օրվա պաշարով շինարարական կազմակերպության պահեստներից, կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը:

Բնապահպանական կառավարման պլանում նախատեսված գործողությունների շրջանակում կբացառվեն տարածքի կանաչ գոտիներում առկա բուսահողի վրա անուղղակի ազդեցությունները, ինչպիսիք են թափոնների տեղադրում, կեղտաջրերի հեռացում (տես Հավելված 1, 5.4 ենթագլուխ` Բուսահողի կառավարման միջոցառումներ):

v. Ազդեցություն բուսական աշխարհի վրա

Կանաչապատ գոտիներում նախատեսվում է իրականացնել նոր ծառաթփային բուսականության ստեղծում: Տնկման աշխատանքների համար կօգտագործվեն տեղական պայմաններին համապատասխանող և դպրոցամերձ տարածքներում կիրառելի ծառերի և թփերի տեսակներ:

Շինարարության ընթացքում տարածքում առկա բուսականության, մասնավորապես կանաչ գոտու պահպանության միջոցառումները ներառվել են ԲԿՊ-ում /տես Հավելված 1 ԲԿՊ, 5.3-Բուսականության պահպանում և կառավարում/:

Շինարարության և հետշինարարական փուլերում կիրականցվեն տարածքում տնկվող ծառերի և թփերի վիճակի մշտադիտարկում /վերահսկում ծրագրի պատվիրատուի՝ ՀՏՁՀ-ի կողմից, մշակված մոնիտորինգային ստուգաթեթիկին համաձայն, որի ձևաչափը ներկայացված է Հավելված 2-ում: Ծրագրի շրջանակում գործող հետշինարարական մոնիտորինգը սահմանվում է մեկ տարի, որի ընթացքում կպաշտպանվեն չապահովող ծառերը կփոխարինվեն նորերով: Նորատունկ կանաչ գոտու խնամքը կհանձնվի դպրոցի տնօրինությանը:

vi. Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Ծրագիրը մեծ անդրադարձ է կատարում հանրության անվտանգության և առողջության, ինչպես նաև շինարարական կազմակերպության աշխատողների անվտանգության և առողջության ապահովման հարցերին, որի համար նախատեսված են մի շարք միջոցառումներ հնարավոր ազդեցությունները և անհարմարությունները բացառելու կամ մեղմացնելու նպատակով:

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի /տես Հավելված 1, ԲԿՊ, 2-Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան/: Հավելված 4-ում ներկայացվում է արտակարգ պատահարի հաշվետվության ձևը:

vii. Հողային համակարգերի վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումներ

Շինարարական աշխատանքների ընթացքում ազդեցության ենթակա հողաբուսաշերտը գնահատվում է 320ի.մ: Կիրականացվի վերջինիս մեկուսացում և պահպանում դպրոցի տարածքում՝ հետագայում կանաչապատման աշխատանքներում օգտագործման նպատակով: Ժամանակավոր պահպանումը կիրականացվի 2մ-ը չգերազանցող լայնակույտերի ձևով և պաստառներով ծածկված վիճակում՝ բացառելու համար փոշու տարածումը, հողմատարումը, մթնոլորտային երևույթների ազդեցությունը, շին աղբով աղտոտումը և այլ գործոններ: Բուսահողի պահպանումը կիրականացվի շինարարական հրապարակի տարածքում, իսկ պահպանման առավալագույն ժամանակը չի

գերազանցի 2 տարին (Հավելված ՀՀ կառավարության N 1404-Ն որոշման, 2 նոյեմբեր 2017թ.):

Հողային աշխատանքների ընթացքում առաջացած գրունտ, որը գնահատվում է հետագա օգտագործման համար ոչ պիտանի կտեղափոխվի և կթափոնակույտվի համայնքային աղբավայրում /համայնքի կողմից ներկայացված է տեղեկանքը/:

Հրապարակում քսայուղերը և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային շերտերի հնարավոր աղտոտման ռիսկերը:

Նախատեսվող գործունեության ընթացքում մեքենա-սարքավորումների լիզքավորումը, քսայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողությունները հիմնականում կիրականցվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և հնարավոր ռիսկերը: Նշված ռիսկերի կառավարման միջոցառումները մանրամասն ներկայացված են Հավելված 1-ում (5 և 6 ենթաբաժին, Թափոնների կառավարում և արտակարգ իրավիճակների կառավարում):

viii. Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները
Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- Հրդեհի առաջացում
- Հեղուկ նյութերի արտահոսք
- Աշխատողների վնասվածքներ
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարներ

Հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով պարբերաբար շինարարական տեղամասում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:
- Շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվելու են հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործման, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:
- Բանվորական և ղեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:
- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն

առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան (ձևաչափը տես Հավելված 4), որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել: Բոլոր գրանցամատյանները կվերահսկվեն և կուսումնասիրվեն ՀՏՁՀ-ի կողմից բնապահապանական և սոցիալական մոնիտորինգային այցելությունների ընթացքում, անհրաժեշտության դեպքում կձեռնարկվեն իրազեկության բարձրացման միջոցառումներ:

- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:

Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

7 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները

Ծրագրի համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին, ինչպես նաև ԱԶԲ բնապահպանական անվտանգության սկզբունքներին նախատեսվում է ապահովել բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) միջոցով: ԲԿՊ պարունակում է Ծրագրի բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն և շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներն, ինչպես նաև մոնիտորինգի գործողությունները՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին: Ծրագրի համար մշակված ԲԿՊ ամբողջական ներկայացված է Հավելված 1-ում :

ԲԿՊ-ն որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական շինարար կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ի իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

Ստորև ամփոփ բերվում են նախատեսվող գործունեությունից ակնկալվող ազդեցությունները մեղմացնող և/կամ բացառող հիմնական բնապահպանական և աշխատանքի և առողջության ապահովման միջոցառումներն, որոնք պատշաճ ձևով

կիրականացվեն ենթածրագրի իրականացման ընթացքում.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ,
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- շինարական աղբի և գրունտի կանանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև հրապարակում կտեղադրվեն կենցաղային թափոնների համար նախատեսված աղբամաններ,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերին համապատասխան,
- շինարարական մեքենաների տեղաշարժը կիրականացվի սահմանափակ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքներն կիրականացվեն թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին մինչև ժամը 18:00,
- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարից
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե կամ ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա,
- ենթածրագրի ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ,
- շինարար կապալառուն պարտավոր է ապահովել աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումները, ներառյալ՝ բանվորական կազմին ապահովել սեզոնային արտահագուստով և անվտանգության սաղավարտներով,
 - տարածքում կանաչապատ գոտիների ընդլայնում, ինչպես նաև ազդեցության ենթակա ծառերի վերատնկում, նոր արժեքավոր ծառատեսակների տնկում:

Ենթածրագրի շրջանակում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը (առանց հարկերի) գնահատվում է 1185000 ՀՀ դրամ: Նշված արժեքը ստորև աղյուսակում ներառում է նախագծման փուլում՝ տեղեկատվության հրապարակման և հանրային ծանուցման, բնապահպանական փորձաքննության համար նախատեսվող ծախսերը, շինարարության փուլում՝ շինարարական աղբի հեռացման, բուսահողի բերման և կանաչապատման աշխատանքները: Նշված միջոցառումների ծախսերը հաշվի են առնված դպրոցի նախագծի ծավալաթերթերում: Բնապահպանական կառավարման պլանում ներկայացված մնացած միջոցառումները շինարար կապալառուն կիրականացնի ենթածրագրի շրջանակում հատկացվող օժանդակ ծախսերի գումարից, որը կազմում է ծրագրի արժեքի մոտ 2 %-ը:

Մեղմացնող միջոցառումների համար նախատեսված են 1185000 ՀՀ դրամ:

Մոնիտորինգ

ՀՏՁՀ-ի կողմից կանոնավոր մոնիտորինգ է իրականացվելու ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով: ՀՏՁՀ-ի բնապահպանության և սոցիալական երաշխիքների մասնագետներն իրականացնելու է մոնիտորինգի դաշտային ստուգայցեր յուրաքանչյուր ենթածրագրի կտրվածքով երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիտորինգի ստուգաթերթիկում, որի ձևաչափը ներկայացվում է Հավելված 2:

ՀՏՁՀ-ն հանձնարարելու է տեխնիկական վերահսկողին իրականացնել ամենօրյա հսկողություն: Տեխնիկական վերահսկողները հսկելու են նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը և ժամանակին տեղեկացնելու են ՀՏՁՀ-ին նկատված անհամապատասխանությունների մասին:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի, ջրի որակի և թրթռումների մակարդակի պարամետրերի չափագրումներն իրականացնել ազդակիր կողմերի համապատասխան բողոքների դեպքերում: Բողոքների գրանցամատյանի ձևաչափը բերված է Հավելված 3-ում:

8 ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻՉՄ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության շրջանակում ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Վարդենուտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել է դպրոցի կառուցման վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հանրային քննարկում: Իրականացվել է պատշաճ ծանուցում Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Առավոտ» օրաթերթի համարում և այլն:

Հանրային քննարկմանը ներկա են գտնվել բոլոր շահագրգիռ և ազդակակիր կողմերը, ներառյալ ներկայացուցիչներ կառուցվող դպրոցի նախագծային կազմակերպությունից և ՀՏՁՀ-ից: Քննարկման մասնակիցների ցանկը ներկայացվում է սույն ՇՄԱԳ-ին կից:

ՀՏՁՀ կողմից ենթածրագրի իրականացման ողջ ընթացքում ներդրվելու է բողոքների անդրադարձման մեխանիզմ՝ (ԲԱՄ) հաշվի առնելով ԱԶԲ պահաջները և ՄԱԲ ծրագրի

առանձնահատկությունները: ԲԱՄ-ի հիմնական գործառույթները ներկայացված են ԲԿՊ-ում (Հավելված 1), իսկ բողոքների գրանցման ձևը բերվում է Հավելված 3-ում: Առավել մանրամասն տեղեկատվությունը շահառուների հետ կապի և բողոքների լուծման մեխանիզմների վերաբերյալ ներկայացված է ՀՏԶ-ի պաշտոնական կայքում (www.atdf.am):

9 ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- ԱԴԲ 2015: Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1 Բնապահպանական կառավարման պլան՝ մեղմացնող միջոցառումներ

Աղյուսակ 1: Մեղմացնող միջոցառումներ					
Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Միջոցառման իրականացման պատասխանատու մարմին	Մոնիտորինգի պատասխանատու մարմին	Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է ծրագրի արժեքի մոտ 1.2-1.5%
ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈԻԼ					
1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և դրական եզրակացության ձեռքբերում	Համաձայն ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի (հուլիս 2014 թ., խմբ.), ըստ ազդեցության նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես «Բ» կատեգորիա:	1.1. Մշակվել և ՀՀ ՇՄՆ է ներկայացվելու ՇՄԱԳ հաշվետվությունը՝ բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու և փորձագիտական եզրակացություն ձեռք բերելու նպատակով:	«Էկո Բիլդինգ» ՍՊԸ, ՀՏԶՀ,	ՀՏԶՀ	

<p>2. Հանրային քննարկումներ, հանրության իրազեկում</p>	<p>Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են Ծրագրի ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:</p>	<p>2.1. ՄԱԲ ծրագրի և դպրոցի կառուցման նախագծի վերաբերյալ առաջին հանրային իրազեկում/ քննարկումն իրականացվել է:</p> <p>2.2. Շրջակամիջավայրի վրա ազդեցության փորձաքննության շրջանակում իրականացվելու է դպրոցի կառուցման նախագծի և շրջակամիջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունների վերաբերյալ երկրորդ հանրային քննարկումը:</p> <p>2.3. Հանրային քննարկմանը ներկայացվել է նաև Բողոքների Անդրադարձման Մեխանիզմը (ԲԱՄ), որի ներդրումը կիրականացվի ՀՏՁՀ-ի կողմից սահմանված մեխանիզմին համաձայն (զանգահարել ՀՏՁՀ-ի թեժ գիծ և/կամ տեւ 4.1 ենթակետ):</p>	<p>«Էկո Բիլդինգ» ՄՊԸ, ՀՏՁՀ, Ապարանի համայնքապետարան</p> <p>«Էկո Բիլդինգ» ՄՊԸ, ՀՏՁՀ, Ապարանի համայնքապետարան «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ ՀՏՁՀ</p> <p>ՀՏՁՀ</p>	<p>ՀՏՁՀ</p>	
---	---	--	--	-------------	--

3. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում	ԲԿՊ-ի պահանջները անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ դպրոցի շինարարության և շահագործման փուլերում:	3.1. Աշխատանքային նախագիծը մշակվել է հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև մրցութային և պայմանագրային փաստաթղթերում:	ՀՏՁՀ	ՀՏՁՀ	
--	---	--	------	------	--

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ (ԿԱՌՈՒՑՈՒՄ)					
1. Առողջության և աշխատանքային անվտանգության պլան					
4. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	ԲԿՊ-ի և դպրոցի կառուցման ծրագրի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման: Շինհրապարակի մերձակայքում բնակվող և շինարարական հրապարակում աշխատող մարդկանց ցանկացած հիվանդությունը, վնասվածքը կամ մահը վտանգավոր նյութերի, շին առարկաների ոչ ճիշտ դասավորման և շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպման պատճառով անընդունելի է և կպահանջի համապատասխան	4.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: 4.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, պաստառներ և այլն: 4.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը, մասնավորապես՝ չհսկված	Կապալառու Կապալառու	ՀՏՁՀ ՏՎԽ	

	<p>պատժամիջոցների կիրառում:</p>	<p>Էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում: 4.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հրապարակում: 4.5. Անհրաժեշտ է փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: 4.6. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության դեղատուփի առկայությունը և</p>	<p>Կապալառու Կապալառու Կապալառու</p>		
--	---------------------------------	--	--	--	--

